9/22 ՄԱՐՏ 1904

Ա. ՏԱՐԻ — Թիւ 39

ԵՐԱՆԵԼՈՒԹԻՒՆ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին՝ 10 Քր. տարեկան

Հասցէ՝
Réd. du jour. „VERADZNOUTIOUN“.-Roustchouk
Ред. на в. „ВЕРАДЗНУТЮНЪ“. — Русе

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊՐՕԼԵՏԱՐԻԱՏԻՆ

Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք!

Պատերազմը սկսած է։ Ճապոնացիք արդէն մի շարք յաղթութիւններ են տարել ռուսաց զօրքերի դէմ, եւ ցարի կառավարութիւնը լարում է այժմ իր բոլոր ոյժերը՝ իր վրէժը լուծելու ճապոնացիներից իր կրած պարտութիւնների համար։ Զինուորական շրջանները մէկը միւսի հետեւից կենտրոնացնում են իրանց զօրքերը, տասնեակ հազարաւոր զինուորներ շտապով ուղարկւում են Հեռաւոր Արեւելք, արտասահմանում յուսահատ ճիգեր են թափւում նոր փախառութեան համար, կապալառուներին հազարաւոր ռուբլիներ են խոստանում ամեն մի օրայ համար, որպէսզի նրանք շտապեցնեն զինուորական վարչութեանը անհրաժեշտ աշխատանքները։ Ժողովրդի բոլոր ոյժերը սարսափելի կերպով լարում են, որովհետեւ կռիւը շատ լուրջ կռիւ է. նա ուղղած է 50 միլիոնից բաղկացած մի ժողովրդի դէմ, որը շատ լաւ զինուած է և շատ լաւ պատրաստուած պատերազմի համար։ Ճապոնացիք կռւում են յանուն մի գործի, որը, նրանց կարծիքով, միանգամայն անհրաժեշտ է իրանց ազգային ազատ զարգացման համար։ Այդ պատերազմում կանգնած են դէմ յանդիման մի կողմից՝ յեսամնաց բռնակալ կառավարութիւնը, միւս կողմից՝ քաղաքականապէս ազատ եւ կուլտուրապէս արագ առաջադիմող մի ժողովուրդ։ Թոյլ Տաճկաստանի դէմ մղուած կռիւը 1877–78 թւականներին որը այնքան թանկ նստեց ռուս ժողովրդին, համարեայ ոչինչ էր, համեմատելով այժմ սկսուած պատերազմի հետ։

Եւ ինչի համար է արդեօք, որ ցարի հպատակ բանուորը և գիւղացին կեանքի ու մահուան կռիւ են սկսել այժմ ճապոնացիների դէմ։ Արդեօք այն նոր հողի կտորների համար, որ ձեռք է գցել ռուսաց կառավարութիւնը — Մանջուրիայի ու Կորէայի, «Դեղին Ռուսաստանի» համար?

Ռուսաց կառավարութիւնը խոստացել էր բոլոր պետութիւններին պահպանել Չինաստանի անձեռնմխելիութիւնը. նա խոստացել էր վերադարձնել Մանջուրիան Չինաստանին 1903 թւի հոկտեմբեր 8-ից ոչ ուշ, եւ նա չկատարեց իր այդ խոստումը։ Ցարի կառավարութիւնը այն տեղը էր հասել իր արկածախնդիր նուաճողական քաղաքականութեան մէջ, հարեւան երկրները թալանելու գործում, որ նա այլեւս անկարող էր յետ նահանջել։ «Դեղին Ռուսաստանում» արդէն ամրոցներ ու նաւահանգիստներ էին կառուցած, երկաթուղի դրած էր անցկացրած, տասնեակ-հազարաւոր զօրքեր էին հաւաքուած։

Բայց ինչ օգուտ մեր ժողովրդին այդ նոր հողերից, որոնց համար նա այնքան արիւն է թափել, այնքան զոհեր է տուել եւ ստիպուած է դեռ անհամեմատաւելի շատ զոհեր տալ այժմ? Մերլանուորներին և գիւղացիներին նոր թշուառութիւններ միայն կարող է խոստանալ այդ պատերազմը, անհուն ու անթիւ մարդկային զոհեր, հարիւր հազարաւոր ընտանիքների դժբախտութիւն, նոր հարկեր ու նոր պարտականութիւններ։ Ռուսաց զինուորական իշխանութեանը և ցարի կառավարութեանը թւում է, որ նա պատերազմական փառք է խոստանում իրանց։ Վաճառականներին և միլիոնատեր-արդիւնաբերողներին պատերազմը անհրաժեշտ է թւում, որպէսզի նրանց ձեռքից չգնան ապրանքները ըստանալու այդ նոր շուկաները և Ռուսաստանի վաճառականութեան համար անհրաժեշտ նոր նաւահանգիստները ազատ ու չը սառչող ծովի ափերին։ Մեր ապքատ գիւղացիները և անգործ բանուորները չեն կարող սպառել նրանց բոլոր ապրանքները, անհրաժեշտ է շուկաներ փնտրել օտար երկրներում։ Բուրժուազիայի հարստութիւնները գոյացել են ամբողջովին բանուորների քրտինքով, և ահա այժմ այդ հարստութիւնները աւելի ևս շատացնելու համար նոյն բանուորները ստիպուած են արիւն թափել, որպէսզի Ռուսաստանի բուրժուազիան կարողանայ ազատ կերպով տիրանալ ու ստրկացնել նաև Չինացի ու Կորէացի աշխատաւորներին։

Ագահ բուրժուազիայի շահերը, եկամուտի համար իր հայրենիքը վաճառելու ու աւերելու ընդունակ կապիտալի շահերը, — ահա՛ թէ ինչ առաջ բերեց այդ խայտառակ պատերազմը, որն անհամար թշուառութիւններ պէտք է բերէ աշխատաւոր ժողովրդին։ Բռնապետական կառավարութեան քաղաքականութիւնը, որ ոտնակոխ է անում ամեն տեսակ մարդկային իրաւունքներ և ստրկութեան մէջ է պահում ամբողջ ժողովուրդը, — ահա՛ թէ ինչն է, որ ստիպում է այժմ նրան խաղալ ռուս քաղաքացիների արեան և ունեցածքի հետ։

Եւ ի պատասխան ռազմական յոխ աղաղակների, ի պատասխան՝ ոսկէ տոպրակի ու ոստիկանական մտրակի ծառաների «հայրենասիրական» յոյյերի, գիտակցեալ ան, սոցիալ-դեմոկրատական պրոլետարիատը պէտք է հանդէս գայ այսօր և տասնապատկած եռանդով կրկնէ իր պահանջը՝ «Դող կորչի՛ մեր սեռութիւնը» և «Դող հերարիւի ժողովրդական orեանդիր ժողովը»!

Սարսափելի հետեւանքներ կարող է ունենալ ցարի կառավարութեան այդ կատաղի խաղը։ Մինչև անգամ աշխարհի դէպքում պատերազմը սպառնում է կատարելապէս քամել ժողովրդական ոյժերը, մինչդեռ յաղթութեան արդիւնքը բոլորովին անհայտ պէտք է լինի։ Օտար պետութիւնները չեն թոյլ տայ Ռուսաստանին վայելել յաղթութեան պտուղները, ինչպէս նրանք թոյլ չըտին այդ 1895 թւին Ճապոնիային։ Իսկ պարտութեան դէպքում այդ պատերազմը ամենից առաջ վերջ կըտայ ժողովրդի տգիտութեան ու իրաւազրկութեան, հալածանքի ու բռնութեան վրայ յենուող ամբողջ կառավարչական սիստեմի գոյութեանը։

Քամի ցանողը, փոթորիկ կը հնձէ!

Կեցցէ՛ միջազգային կապիտալի լծից դէպի կատարեալ ազատութիւնը ձգտող բոլոր երկրների պրոլետարիատի եղբայրական միութիւնը!

Կեցցէ՛ ճապոնական սոցիալ-դեմոկրատիան, որ բոլոր բարձրացրեց պատերազմի դէմ!

Մա՛հ անամօթ ու աւազակաբարոյ ցարի միապետութեանը!

Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութեան

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

II.

Կովկասեան քաղաքական կուսակցութիւնները

Երեք հինգ սկսեն եւ բոլանդակ պիտ մամլենտներ են որ պարզորոշ զանազանում են այդ կուս.-թիւնը միւս կուս.-թիւններից. դրանք են՝ դասակարգային խստութիւն. միջազգայնութիւն *) (միջազ-

*) Միջազգայնութեան գաղափարը շատ շատերին սոսկացնում է. ազգային սենտիմենտալիզմով պատուաստածների սրտի իւղ ուղղակի հալեցնում. իսկ մի քանի ինֆանտիլ «մարքսիստներ» էլ «ֆանտազիա» է երեւում...։ Դրա պատճառն այն է, որ մարդիկ սոց.-դեմոկրատիայի միջազգայնութեան էութիւնը չեն ուզում կամ չեն կարողանում ըմբռնել՝ աւանդած մտքերը խանգարում են։ Ազգայնութեան եւ միջազգայնութեան բովանդակութիւնն ու էութիւնը խիստ հետաքրքիր են. ափսոս միայն, որ այս յոդուածի մէջ չենք կարող կանգ առնել դրանց վրայ։ Վերապահելով մի ուրիշ պատեհ առիթի, թող միայն շեշտուի այստեղ, որ բանուորական միջազգայնութիւնը չէ քարոզում երբէք ազգութացութիւն, օտարացումն, ազգութիւնների ոչնչացումն եւ այլ նման անհեթեթութիւններ. թշնամու կամ նեղ ուղղի մէջ ստեղծուած խրուելակներ. այլ միմիայն բոլոր ազգերի բանուորութեան՝ իբրեւ դասակարգի՝ եղբայրացումն, միացումն բուրժուազիայի դէմ։ Բանուորական՝ այսպէս ասած՝ «միջազգային ազգասիրութիւնը» աւելի բարձր եւ վեհ է, քան բուրժուական «ազգայնական ազգասիրութիւնը»։ Բուրժուազիայի համար ազգ խօսքը շահագործման միջոց է. եւ այն հէնց իւր արիւնակիցների վերաբերմամբ, դասակարգային իշխանութեան պատանդան, այն ինչ պրոլետարիատի համար թանգ է ազգ բէգրիֆի հոգեբանական բովանդակութիւնը։ Թէ որչափ բարձր եւ ազնիւ է բանուորութեան հայացքը ազգութիւնների վերաբերմամբ. ցոյց է տալիս Ռուսաստանի Սոց.-Դէմ. Բան. Կ.-թեան Ծրագրի այն կէտերը, ուր խօսւում է զանազան ազգերի պահանջների մասին։ Այդ կէտերը թարգմանուած են բերուած են «Վերածնութեան» No 30 առաջնորդողի մէջ։

ներ) եւ սոցիալիզմ (նպատակ)։ Այն ինչ սոց.-դէմ. բանւորական կուսակցութեան աջակողմեան թեւը, որին անուանենք ազգայնական-սոցիալիստական, քակում եւ իրարից բաժանում է սոցիալ-դէմոկրատիզմի այդ իրար հետ սերտ կապած, իրար պայմանաւորող, մէկը միւսից բղխող գաղափարները։ Նա թէեւ ընդունում է սոցիալիզմը. այսինքն հասարակութեան ապագայ սոցիալիստական կազմակերպութիւնը, նաեւ՝ դասակարգային խորութիւնը (թեւերս թէօրիա էս), որը սակայն ոչ աբսոլիւտ, այլ ըստ հանգամանքի, ոգով չափով ու սահմանով, բայց ամբողջապէս դէն է ձգում միջազգայնութիւնը եւ ամենաբարեպաշտ ջերմեռանդութեամբ խոնարհւում ազգի՝ իբրեւ ամբողջութեան՝ գաղափարի առջեւ։ Մենք ընդունում ենք միջազգային (!?) սոցիալիզմի վարդապետութիւնը, առարկում են ազգայնական-սոցիալիստները, մինչեւ առանց այդ «ֆանտաստ» միջազգայնութեան։ Միք մոռանալ, որ հայ բանւորը նախ եւ առաջ հայ է, եւ յետոյ արդէն բանւոր, լինելով հայ ազգի անդամ, նա պէտք է հետաքրքրուի ազգային ներքին կեանքով. օր. ժամկոչէն, երէցփոխի կամ վերջապէս գործակալի ընտրութեամբ։ Այդ պատճառով էլ հայ բանւորական սոցիալիստական կ.-թիւնը պէտք է լինի ինքնուրոյն «ազգային մարմին», որպէսզի կապած լինի „արենակցական կապով“ հայ ազգի հետ, որպէսզի հայ հասարակութիւնը տեսնէ, որ նա «Ռուսաստանի խորքերից բերած ուռենի» չէ, այլ „յանուն հայ ազգի փրկութեան“ բուսած ուռենի, որի «տերեւներից հայ պոէտներն էլ հնար ունենան զգացուելու եւ երգելու»։ Բանւորական կուսակցութիւնը պէտք է լինի «ոչ միայն պրոլէտարիատի շահերի պաշտպանը, այլ եւ հայ ճնշուած ժողովուրդի քաղաքական իրաւունքների համար մարտնչողը», ուստի նրա „տնտեսած գործը“ պիտի լինի միապետութեան դէմ կուելը «մինչ այն վայրկեան, երբ այլեւս տապալուած կը լինի այդ բարբարոս ոյժը», այսինքն երբ ձեռք կը բերուի „հայկական անկախութիւն» Կովկասում եւ կը հաստատուի «ֆեդերատիւ սամիալարական հանրապետութիւն»։*) Այդ է ազգայնական սոց. բանւորական կուսակցութեան քաղաքական դաւանանքը։

Ինչպէս տեսնում էք, այդ կուսակցութիւնը ուզում է միեւնոյն ժամանակ նոսած լինել իրարից հեռու տարբեր բարձրութիւն ունեցող երկու աթոռի վրայ։ Մի կողմից ազգային շահ, միւս կողմից դասակարգային շահ. մի կողմից ազգային կռիւ, միւս կողմից էլ դասակարգային կռիւ. մի կողմից «ազգի»փրկութիւն. միւս կողմից... առայժմ ոչինչ։ Հակասութիւններն ակնյայտնի են։

Դէն ձգելով միջազգայնութիւնը եւ առաջին տեղը տալով ազգայնութեան, այդ կուսակցութիւնը ամենակոչտ կերպով մերժանում է իւր սոցիալիստական-բանւորական (?) ընկերներին, եթէ իրօք այդ սկզբունքը նրա յենակէտն է, այլ ոչ թէ «յանուն ազգի փրկութեան“դիմակ։ Նացիոնալիզմը բացասում է միջազգայնութեան, նա թուլացնում եւ նուազեցնում է դասակարգային անտագոնիզմը. նա մթնացնում է շահագործուած դասակարգի եւ միմիայն շահագործուած բանւորի դասակարգային դիտակցութիւնը։ Նոյնպէս եւ «ազգային» շահը. նա խեղդում է դասակարգային շահին, թոյլ չէ տալիս երկրորդին զարգանալու եւ տարածուելու։ „Ազգային բարձր եւ գաղափարական“ շահը նուազեցնում, այլ մոռցնում է դասակարգային «ստոր եւ նիւթական» շահը։ Ցանուն «ազգային» շահին թելադրում են շահագործող բանւորին ձեռք մեկնել „արիւնակից» շահագործող բուրժուային եւ թիկունք տալ նրան իւր իշխանութիւնը ամրապնդելու եւ լայնացնելու. եւ ո՞ւմ վրայ, վերջին հաշուով ի հարկէ հէնց «արիւնակից» պրոլէտարիայի։ Նացիոնալիստական-բանւորական կուսակցութիւնը ուզում է կուել ցարիզմի դէմ ոչ թէ իբրեւ Ռուսաստանի, ուրեմն եւ հայ բանւորութեան ամենատերիմ հակառակորդի, այլ իբրեւ հայ ազգի երդեալ թշնամու դէմ։ Նա ուզում է տապալել այդ «բարբարոս» ոյժը» ոչ թէ իբրեւ սոցիալիզմին խոչնդոտ հանդիսացող հոկայ ուժ, այլ «յանուն հայ ազգի փրկութեան“։ Համաձայն Ռուսաստանի պրոլէտարիայի մի մասի՝ հայ բանւորութեան համար չէ որ նա ուզում է հաստատուած տեսնել Ռուսաստանի ռամկավարական հանրապետութիւնը, որպէսզի բանւորութիւնն ունենայ քաղաքական լայն իրաւունքներ եւ անարգել կռուի բուրժուազիայի դէմ իւր վերջնական նպատակի համար. այլ սոսկ «հայկական անկախութեան» համար...

Ազգայնական-բանւորական այդ կուսակցութիւնը իւր ազգայնական գաղափարներով եւ «հայկական անկախութեան» ձգտումով չէ տարբերւում հայ բուրժուազական յեղափոխական կ.-թիւնից։ Սրա ծրագրի հիմնական պահանջները պիտի կայանան հէնց դրանում։ Հայ բուրժուազիային սիրելի է տեսնել հայ բանւորի իդէալիզմը, նա ուրախութեամբ կը ծափահարէ վերջինիս ինքնազոհութիւնը։ Հայ բարեմիտ բուրժուայի հաշուով Պարնասի վրայ սնուած հայ «պօէտը» զմայլուած կերպէ հայ բանւորի «ազգասիրութիւնը», գաղափարականութիւնը, որ սա յանուն «արենակցական եւ ազգային» կապերի թուլացնում է, զոհում է դասակարգային կռիւը. նա կերպէ հայ բանւորութեան հերոսութիւնը, որ սա իւր արիւնը չխնայից հայ բուրժուազիայի՝ գաղափարական արտայայտութեամբ՝ „հայկական“ անկախութեան համար...։ Հայ բուրժուազական իդէալոգիան միշտ պիտի քարոզէ գեղեցիկ, հմայիչ գաղափարներ՝ ազգասիրութիւն, հայկական անկախութիւն, առանց դասակարգային որեւէ շահի հետ կապելով։ Դըրամական զոհաբերութիւններով եւ իդէալիստական գոյներով նա պիտի առաջ տանէ իւր այդ քարոզը։ Դասակարգային խորութիւնը, ո՛վ հայեր, ջլատում է ազգի ուժերը, տեղութիւն եւ թշնամութիւն է տարածում ազգի մէջ եւ այդպիսով խանգարում, անհնարին դարձնում ազգի միութիւնը արտաքին թշնամու դէմ։ Ինդերնացիոնալիզմը, ազգութեան գաղափարի այդ սոսկալի թշնամին, քանդում է հայութեան տունը, արիւնակից եղբայրներ, եւ բնաջնջման մատնում նրան։ զգուշացէ՛ք այդ անաստուածներից։ Կոչո՛ւմ է հայ ազգը, միանանք ազգային կապով եւ կռուենք ռուս կառավարութեան դէմ «յանուն հայ ազգի փրկութեան»։ Ձեռք բերենք „ազգային անկախութիւն“ եւ ազատենք ազգի գոյութիւնը...։

Ո՞վ կարող է XX դարում հաստատել բուրժուազիայի այդ կոկորդիլոսեան արտասուքին։ այդ սիրուն իդէալիզմն ունի իւր իրական՝ դասակարգային եւ նիւթական ատատը։ Եւ այդ ատատը հայ բուրժուազիայի շահն է։ Եւրոպական ազգերի պատմութիւնը պարունակում է իւր մէջ բուրժուազիայի անտանման «ազգասիրութեան» բազմաթիւ օրինակներ։ Ազգի անունից խօսող, ազգի «շահը» պաշտպանողները եղել են միշտ եւ՝ամենուրեք իշխող դասակարգերը բայց եւ ատատը եղել է միշտ իրենց դասակարգի շահերը։ Իրենց շահը պարուակելու համար առաջ են բերել նրանք «ազգի» շահը. որպէս զի դրանով կարողանան իշխողների „արեւնակցական“ զգացմունքի վրայ ազդել։ Հայ բուրժուազիան չէ կարող տալիս հողերանութիւն ունենալ քան միւս ազգերի բուրժուազիան։ Իդեալիզմով ֆոդարկած ատատը հայ բուրժուազիայի շահագործման եւ իշխանութեան անզուգական ցանկութիւնն է։ Որպէսզի իւր գործարանում աշխատող հայ բանւորի աշխատանքի ուժը „արենակցութեամբ“ շահագործէ եւ նրա դասակարգային վնասակար գիտակցութիւնը խաւարի մէջ պահէ՝ազգային միութիւն է երգում։ Որպէսզի երկրի շուկան իւր դասակարգի այլազգ ջօլէդների մրցումից ազատուէ եւ ամբողջապէս իւր տրամադրութեան տակ դնէ՝ նա ազգային շահ է քարոզում։ Որպէսզի երկրի տէրը լինի եւ կառավարչական դիրքը իւր ձեռքն ունենայ՝ նա ազգային անկախութեան է ձգտում...։

Բերլին Ս. Կասեան

(Շարունակելի)

*) Մենք նկատի ենք ունեցել «Սոց.-դէմ. բանւորական Հայ կազմակերպութեան մանիֆեստը», որից էլ բերել ենք չակերտների մէջ գրածները, միայն ընդգծումներն են մերը։ Այդ խումբը, նկատմանցողակի, գեղեցիկ եւ կտրուկ կերպով արտայայտել է իւրնացիոնալիզմը՝ անուան մէջ. նա կոչւում է ոչ թէ «Հայ սոց.-դէմ. բան. կազմակերպութիւն», այլ« սոց. դէմ. բան. Հայ կազմակերպութիւն»։ Մենք սիրով հաւատում ենք, որ այդ խումբը Դրօշակեանների ից է առաջ եկել. հէնց այն սկզբունքները, որոնք առաջ են բերել այդ կազմակերպութիւնը — նացիոնալիզմ եւ կազմակերպական ֆեդերալիզմ — ժառանգութիւն են այն կուսակցութիւնից։

ՄԵՐ ԱՆԿՈՂՈՄՏԵԼԻ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Քաղաքական այս անբնական կացութիւնը, որն ստեղծել են Ռուսիան ու Տաճկաստանը, առաջադրում է մեզ մի հարց. հայ ազգի աւանդաբար մնացած եւ միապետական սանկցիայով սրբադործուած որե՞ւ է իրաւունք կարո՞ղ է արդեօք համարուել անբնաբարելի։ Պատասխանը պարզ է. — ո՛չ։ Միապետութիւնը սրբութիւն չէ ճանաչում. նա իւր քմահաճոյքներն ունի։ Եւ քանի այսպէս է, մի հասարակութիւն — հայերի պէս իրաւազուրկ մի հասարակութիւն — ի՞նչ միջոցներ կարող է ձեռք առնել անհատների հասարակակրծան եռանդը չափաւորելու համար։ Ո՞րն է այն գերագոյն դատաստանն, որ դիմադրէ գձուձ ու սողացող անձանց գործերին ու կասեցնէ նրանց դաւաճանի գարշ շաւղից։ Ցեսէ՛ք. մի գարշելի անձ կատարում է մի գործ, որ թոյն է այն հասարակութեան համար, որի անդամն է նա, բայց այդ իրաւազուրկ հասարակութիւնն այժ չունի փակելու նենգաւոր բերանը կամ տաւնելու նրա ոտքերը։ Ինչպէս կարելի է ազատել ձեռքը. իսկ երկրի իրական ոյժը — բրնաստութիւնը — գարշ սողունի կուրծքը զարդարում է շքանշաններով։ Ի՞նչ անել...

Աւելի քաղաքակիրթ հասարակութիւններն ընդգծել են մեզ պէս յետամնաց ազգերի համար՝ ուղի. — հասարակական կարծիքի դատը։ Թող ներում մեզ օրինակներով փաստել ու բացատրել այդ ուղին։ Նայենք ռուս հասարակութեան, որ այնքան ուսանելի կողմեր ունի ռուս բրնաստութեան հետ վարած իր խուլ կռուի մէջ։ Ահա ռուս մեծ բանաստեղծ Պուշ.ինը. նա սիրելի է ամենքին. բայց հէնց որ ընկնում է շողոքորթել կառավարութեանը՝ կորցնում է իր ժողովրդականութիւնը։ Ցիշենք անցեալ դարու վաթսունական թուականների յայտնի սլաւոնաֆիլ պրոֆ. Օրեստ Միլլերին, որ լոկ համարձակուել էր բանաստեղծութեան մէջ փնտռել ինչ որ քրիստոնէական տարրեր. և ի՞նչ. բոլոր խմբագրութիւնները փակուեցին Միլլերի առջեւ. նա նոյնիսկ այդ դէպքից երեք տարի անցած՝ չէր համարձակւում սկսել իր դասախօսութիւնները։ Սակայն ի՞նչ էր հասարակութեան պահանջը։ Երբ ամբողջ հասարակութեան տենչանքն է ճորտերի ազատութիւնը, — ամօթ է խօսել քրիստոնէական ինչ որ նեղրոզմտութեան ու հեզութեան մասին եւ այլն։ Նոյն այդ ժամանակ անուանի վիպագիր Լէսկովի խօսել էր ուսանողութեան վատ ընթացքի մասին։ Հասարակութիւնը գարշեց Լէսկովից. նրա անունը յիշւում էր որպէս անարգանք, և հասարակութեան դատաստանը տասնեակ տարիներից յետոյ նոյնիսկ չմեղմացաւ նրա մահուամբ։ Բայց Լէսկովը ոչ մատնիչ էր, ոչ ոստիկան. նա լոկ չէր համակրում ռուսական շարժումներին։ Պատմութիւնն էլ չմոռացաւ խայտառակութեան սիւնին գամել Լէսկովի անունը։

Նոյնիսկ մեր ժամանակ ռուս հասարակութիւնը հալածում է մի ինքնատիպ և կարող գրողի — բանաստեղծ Մերեժկովսկուն։ Վերջինս համարձակուել է ուղղափառութեան թշնամի Տօլստոյին քննադատել ըստ իր հայեցողութեան։ Այսպէս է գիտակից հասարակութիւնը։ Եւ քանի որ գրական անհամաձայնութիւններն անդամ առաջ են մղում հասարակական այսպիսի բուռն բողոքներ, ապա ի՞նչ գիրք պէտք է ընդունէ հասարակութիւնը, երբ իր անդամը դառնում է կամաւոր ժանդարմ կամ ոստիկան։ Նայեցէ՛ք, ինչպէ՞ս են անարգւում ռազգասէրներս Սուվորին, Գրինգմուտ և այլք՝ իրանց ռուսական յուի իրականութիւնն արդարացնելու չանքերի համար. նայեցէ՛ք զլուանքի ի՞նչ տա-

բափ է տեղում ոտիկան–իմաստասիրը Կրուշևվանի վրայ։ Նոյնիսկ բարեկամները, Սուվորինի պէս անամօթները, ձեռք են մեկնում Կրուշևվանին գաղտնապուկ։ Ի՞նչ է ցոյց տալիս սա։—Ա՛յն՝ որ Ռուսաստանում կայ հասարակական կարծիք և որ հասարակութեան գերագոյն դեկավարը հանդիսանում է ո՛չ թէ միապետութեան XVI հասարանոց օրինադիրքը, այլ սպանիչ հասարակական կարծիքը։ Իհարկէ, այդ կարծիքը թոյլ է դեռ Լինչի դատաստանի վերափոխուելու համար, բայց որ նա բարոյապէս մեռցնող է, — դա անկասկածելի է։ Օրինակներ. Վելիչկո, Կրուշևվան, Իգնատիև և այլն, որոնց անունները նոզկանքով է յիշւում. և ո՞ր բարեխիղճ ընթերցողը դարշանք չէ զգում լսելով այդ անունները։

Հասարակական կարծիքը. — ահա՛ մեր անկողոպտելի ու անբռնաբարելի իրաւունքը։

«Ոչ մարդկային ձեռք կը հանի էն ահաւոր բարձունքին...»

և ոչ ցարերի ժանգոտած շղթան, կաւելացնենք մենք։

Բայց մի հարց. գոյութիւն ունի՞ մեր մէջ այդ հասարակական կարծիքը։ — Ո՛չ։ Ապա, էլ ինչո՞վ բացատրենք, որ մի հոգևորականութիւն երէկ անէծք էր կարդում ցարիզմին, այսօր պոռնկաբար լիզում է կօզակի մտրակը, մաղթանքներ է կատարում բռնապետութեան շղթաների ամրութեան համար. ինչո՞վ բացատրենք ինժենէրներ Խատիսեանի և Վաչեանցի ստոր արարմունքը Բագուում — ծնկաչոք աղօթել ցարիզմի համար և այն էլ փողոցում։ Ա՜հ, գարշելիներ. չէ՞ որերէկ դուք «ազգասէրներ» էիք... Ա՜մօթ մի հասարակութեան, որ անկարող է դատապարտել ու պատժել գալարուող սողուններին։ Ամո՜թ հայ հասարակութեան։

Տեսէ՛ք. Բագուն ունի մի աղնիւ ռուս քաղաքագլուխ՝ Ալ. Նովիկով, որ համարձակօրէն ձեռք չէ մեկնում ժանգարմ–իշխանին, մաղթանք չէ կատարում Գոլիցինի համար. բայց հայ իշխ. Արղութեան՝ Թիֆլիսի քաղաքագլուխը՝ համար. բայց հայ իշխ. Արղութեան՝ Թիֆլիսի քաղաքագլուխը՝ կատարում է այդ ստորութիւնները, իսկ այդ ժամանակ հայ ինժենէր Խատիսեան դաշն է կապում թաթար համիսլամականների հետ Բագուից փախցնելու անզուգական ռուս գործիչ Նովիկովին։ Դէ՞ռ Զիմզիմով։ Նոյն այդ Խատիսեանի հարստութեան մէջ, ինչպէս պատմում են, անպակաս են ազգային կոպէկները։ Եւ հայ հասարակութիւնը այդ բոլորը տեսնում է ու լռում։ Ո՛չ միայն լռում է, այլ և յարգում, պատուում Վաչեանցի ու Խատիսեանի պէս այլանդակութիւնները։

Միթէ՞ կարելի է երևակայել սրանից էլ աւելի մի մեծ անկում, բարոյական մի այլ մահ։

Ու յիսոյ դալիս է մեզ ամենամեծ ռո՞ւմբը։

Ի՞նչ, մենք պէտք է մահացնենք նաև հայկական խիղճը։ Միթէ՞ քիչ են հայ ժողովրդի զոհաբերութիւնները, որ մեր ազնամեծ հոգևորականութիւնն ու բուրժուազիան կամենում են վաճառքի հանել նաև այդ ժողովրդի պատիւը։ Չէ՛. Լինչի դատաստանը քիչ է այդ վատասիրտ ու ստրկահոգի մարդկանց համար։ Նրանք պէտք է զգան ու տանջուին. նրա՞ց պէտք է հալածէ ու մեռցնէ հասարակական կարծիքը։ և հենց անհրաժեշտ է մեզ այդ ցասկոտ հասարակական կարծիքը։ Այո՛. դա մեր անկողոպտելի իրաւունքն է. պէտք է ստեղծել այդ կարծիքը։

Գանձակ Ջրաբերդեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ Ա–ԻՆ

ՆԱՄԱԿ V.

—

Սիրելի ընկեր!

Անցեալ նամակով յառաջ էի բերել Ռուսաստանում գոյութիւն ունեցող աղատախօս մամուլի և անկաշառ գրչի անմխիթար վիճակը, նոցա դէմ եղած անհուն հալածանքները, խոչնդոտները, մի խօսքով նոցա մարդասիրական վեհ դաղափարների փչոտ ուղին։ Ծանր է իսկապէս, շա՞տ ծանր այն ընդդծած ճանապարհը, որով պէտք է ընդանայ տանջուածի, աղքատի, հալածուածի, իրաւազուրկ բանուորի անձնալոհ պաշտպանը։ Ծանր է, սրտմտելը բռնակալ պետութիւնը՝ օգտուելով մասսայի մուռոր խաւարից, նախանամութեան անընդհատ միջամտութեան և ամենակարողութեան զզուելի «ինէյնեմների» տակ թաքնուած՝ դարերի ընթացքում խաբել, կեղծել, բթացրել, անբարոյականացրել ու քնացրել է նրան։ Այսպիսով, նա՝ ժողովրդի ամենաջինջ, ամենավառվռուն և անկեղծ զդացումները մեռցնելով, նորա դարաւոր նիրհը աւելի հզօրացնելով՝ յաջողացրել է անվերջ կերպով կեղեքել, դողանալ, յափշտակել նորա արդար վաստակը, յաջողացրել է արիւնախում տղրուկի նման անվերջ ծծել անճար ժողովրդի ամբողջ կենսունակութիւնը և ոյժը։ Իսկ այժմ հէնց այդ միևնոյն ճնշուած ժողովրդի սեպհական ոյժը, կարողութիւնը և հարստութիւնն է որ իւր հզօրագոյն թաթերումը սեղմած, առանց մի մաղաչափ խղճի խայթ զգալու, աչ ու ձախ՝ լայ, աղաղակ, բանտ ու աքսոր, արիւն ու մահ է սփռում։ Ա՜հ մարդակեր դազան...

Անողոք և անտանելի է դառնալ այդ հնադարեան ատամը թափած բռնապետութիւնը։ Բայց ցաւօք սրտի պէտք է ասել, որ այդ անագորոյն հրէշին տապալել, նորա վայրենի թաթերից դժբաղդ մարդկութիւնը ազատել, այնքան թանգ պիտի արժէ։ Որքա՞ն անմեղ արիւններ, որքա՞ն ապնիւ և անաղարտ հոգիներ մարդկութեան ապագայ երջանկութեան՝ հաւասարասիրութեան վսեմ սեղանին՝ զոհ են դնացել և պէտք է գնան։ Այո՛, գաղափարները ամենայն ուրեք և ամենայն ժամանակ չարչարուել, խաչուել, թաղուել են, բայց վերջ ի վերջոյ յարութիւն են առել, յաղթանակը տարել են։

Հերոսական այդ անհաւասար կռիւը շարունակուել է մինչև այն ժամանակ, քանի իւր դագաթնակէտին հասած «իմաքոնիա» անբարոյական կործանիչ կռիւը իւր մահացու հարուածը չի տացել։ Հաւասարասիրութեան բարձր իդէան գործնականութեան շրջանակի մէջ չի կարող մուտք գործել, քանի չի հասկացուել «ընկերական մարդկութեան» փոխադարձ կապը, նոցա անբաժան շահերի անխզելի օղակը՝ որի մի անդամի, երկրի կամ պետութեան նպաստացուցիչ կամ աննպաստ հանգամանքի անմիջական հետևանքը ստեղծում է և ամբողջ մարդկութեան միևնոյն նպաստաւոր կամ աննպաստ պայմանը։ Ահա թէ ինչու համար պէտք է հարուածել, մեռցնել հանրամարդկային շահերի ամէն մի վնասակար անդամի եռասիրական նեղ ձգտումը, ձեռնարկութիւնը, ոյժն ու կարողութիւնը։ Այդպիսի անզուգական հերոսներն են ահա մարդկութեան կամ ազգերի բեղմնաւոր օժիտները և տիտանները։ Դոքա են կեանքի մրրկածուփ ալիքներին կուլ գընացող մեր նաւակի միակ լուսատու փարոսները, որոնք միշտ դէպի կեանք, դէպի աղատութիւն, դէպի խաղաղ նաւահանգիստն են առաջնորդում։ Իսկ մենք, սիրելի ընկեր! ահա այդպիսիների աճիւնի առջևն է որ մեր գլուխները խոնարհեցրած, խունկ ուկեղբուկի քուլաների հետ մեր անհուն սիրոյ և խորին յարգանքի շիթերը դէպի վե՞ր, դէպի վսեմը, դէպի անծանօթն ենք վերառաքում։ Նոցա յաւէտ յիշատակն է, որ մեր կիսակենդան սրտերում յաղթական կոթող է կանգնեցնում։

Ամբարտաւան կղեր, անարգ սուր և բաղդախնդիր մամուլ, — ահա այն երեք դահիճները, այն երեք փտած պատուանդանները, որոնց վերայ յենուած է ռուսական զզուելի բռնապետութիւնը։ Աշխարհիս երեսին հաղիւ մի մոլեռանդ, ծայրայեղութեան հասած մի կրօնասէր և զանազան իկօնների (սրբոց նկարներ) ստրկացած և միևնոյն ժամանակ անտարբեր ու անբարոյականութեան տղմի մէջ թաղուած մի ժողովուրդ, մի ազգ կարելի է ճարել, որքան ռուսն է։ Եւ դա շատ բնական է, քանի որ այդ է քարոզում և կղերը, և պետութիւնը, և եկեղեցին, և պահպանողական պնակալէզ մամուլը։ Մշտապէս կրօնական այդ քնացուցիչ ալէբները, քարոզները, հրաչքները և սրբոց պատկերներն է տեսնում ռուս ժողովուրդը թէ՛ հրապարակներում և փողոցներում, վաճառանոցներում և բնակարաններում ու զանազան պաշտօնական հաստատութիւնների մէջ և թէ՛ բոլոր մինակարգ ու բարձրագոյն դպրոցներում և մինչև անգամ դինետներում ու հասարակաց տներում։ Սոքա բոլորն էլ իսկապէս անծանօթ մարդկանց վերայ կատարեալ մի մի աղօթատան ազդեցութիւն են գործում։

Ահա թէ ի՞նչ ստոր միջոցներով ռուս պետութիւնը կարողացել է կոյր ֆանատիկոսութեան խոր արմատներ ձգել ժողովրդի մէջ, ֆանատիկոսութիւն, որ, նորից չեշտում և ընդգծում եմ, հաղիւ արևելքի ամենամոլեռանդ մահմեդականը կարոդանայ նորա հետ մրցել։

Դուցէ, սիրելի ընկեր! վերեւ յիշուած «դինետուն», «հասարակաց տուն» և այդ բառերին միանգամայն ներշակ «սրբոց մասունքներ», «կրօնական ֆանատիկոսութիւն» երևոյթների միատեղ գոյութիւնը քեզ շատ հակասական և տարօրինակ թըւին։ Թերևս զարմանաս, որ ոչ թէ եկեղեցւոյ, այլ և ամենատարական էտիկայի սկզբունքների և էութեան բոլորովին անհերդաշնակ է յանկարծ տեսնել առնառականոցներում, դինետներում և նման հաստատութիւնների մէջ կողք կողքի խաչեր, սրբոց անթիւ մասունքներ, Ս. Գրքեր և այս բոլորի վերայ պարտաւորեցուցիչ կերպով աւելացրած կայսեր պատկերը և նոցա առաջ մշտապէս վառուող անշէջ լամպը, մոմերը և այլն։ Այո՛, մի զարմանար, թէև իրար միանգամայն անհամադնելի երևոյթ — բայց և իրականութիւն։ Մի զարմանար, եթէ ասեմ որ առանց գլուխը բաց անելու և խաչ հանելու, ոչ ոք չի կարող այդ զզուելի հաստատութիւնների մէջ անդամ մուտք ունենալ։

Մոսկուա Արաք

(Շարունակելի)

ԱՍՏՐԱԽԱՆ, 22 փետր. 1904 թ.

Ինքնագով կառավարութեան բոլոր ուշադրութիւնը ծարքացած է կեղծ ու պատիր եւ ստայոդ պարծանքի վերայ։ Օրուայ ամեն մի հետաքրքրութեան ցարի կառավարութիւնը երկրորդական տեղ է տալիս։ Հասարակութիւնն անհամբեր լուրեր ու ճիշտ տեղեկութիւններ է սպասում պատերազմի դաշտից, իսկ կառավարութիւնը կերակրում է նրան չինուոր հեռագիրներով։ Փոքրիկ Եապոնիան բռնել է գրեթէ ամբողջ Կորէան, խորտակել է քանի-քանի պատերազմական նաւեր եւ այդ ամենից յետոյ հիւսի-

սային յաւակնոտ ցարը իր ուժերն է գովում ու պարծենում։

Դեռ փոքրիկ Եապոնիայի հետ զբաղուելիս չհանելով, սպառնալիքներ է կարդում Անգլիայի հասցէին։ Պէտք է ասել՝ ներկայումս Տիբեթի կողմից Անգլիայի յառաջխաղացումը թիւնը բիչ խօսքի ու դատողութեան առիթ չի տալիս։ Լուրեր են պտտում իբր թէ Աստրախան վարձուած են հազար, որոնցով Զօլղայի բացուելուն պէս մեր քաղաքի վրայով զօրք պէտք է անցնի փոխուելու դէպի Տիբեթի սահմանները։ Առանց այդ երկիւղը արդէն պատել է ժողովրդին։ Ամենքը երկիւղած ասում են՝ թէ քանի որ փոքրիկ Եապոնիայի հետ գլուխ չենք հանում, ի՞նչ կը լինի մեր դրութիւնը, երբ պատերազմ ծագի հսկայ Անգլիայի հետ Թիբեթի սահմաններում։

Իսկ կառավարութիւնը գալիս է դարձեալ նոյն երգերով օրոր կարդալու, ինչ որ եապոնական պատերազմից առաջ անում էր, այսինքն՝ թմրեցուցիչ զարնել ու պարծենալ։ Նա ասում է՝ թէ Ռուսաստանի ուժը անսպառ է, թէ նա կարող է միաժամանակ կռուել Եապոնիայի եւ Անգլիայի հետ եւ թէ նոյն ժամանակ իր շահերը պաշտպանել Բալկանեան թերակղզում։ Այդ ոգով տէրութեան կաշառուած թերթերը ահա թէ ի՞նչեն գրում. — Ռուսաստանն ամեն ժամանակ կարող է պատերազմի դաշտը հանել 61.000 սպայ եւ 3.592.000 զինուոր. կարող է Անգլիային՝ իբրեւ ցամաքի վրայ անընդունակ կառավարութեան՝ Տիբեթի սահմաններում մեծ վնաս հասցնել։ Ռուսաստանի յաղթութիւնն ու յաջողութիւնը (?!) կը խրախուսէ եւ բնիկներին, որոնք կարող են յարմար դէպքում դէնք բարձրացնել Անգլիայի դէմ Տիբեթի սահմաններում։

Մենք չենք հաւատում եւ բարեբախտաբար մեզ հետ շատ-շատերը ծիծաղում են կառավարութեան մեծ-մեծ խօսքերի վրա։ Փաստերը, ա՛խ այդ փաստերը, դրանք միշտ փչրել են ամեն յաւակնոտ ճչտում։ Մի բոպէ ենթադրենք, որ Ռուսաստանի զօրքը կարելի է միլիոններով հաշուել. բայց ո՞վ չի իմանում ռուսական զօրքի տգիտութիւնը, սպաների եւ մեծաւորների կաշառակերութիւնը։ Իսկ այդպիսի զօրքի վրա մեծ յոյսեր տածել երեխայութիւն է։ Պատմութեան մէջ դէպքեր շատ են եղել, որ ոչխարային պատրաստութեամբ զօրքերը ջարդուել են՝ փոքրաթիւ, բայց գիտակից եւ լաւ պատրաստուած զօրքերից։ Այդ՝ բարոյական արժանիքը. հիմա տեսնենք քանակութիւնը։ Այդ միլիոններից հանեցէք այն թիւը, որը պէտք է կանգնեցնել հազարաւոր վերստեր տարածուող թշնամական սահմաններում, օրինակ՝ արեւմտեան, հարաւի, Սիբերիայի երկաթուղու գծի վրա. բացի այդ, հաշուեցէք թէ ո՞րքան ուժ եւ զօրք պէտք է մնայ ներքին թշնամիներին խաղաղ դրութեան մէջ պահելու համար։ Ո՞վ չգիտէ, որ ներկայումս Ռուսաստանի միապետական բէժիմին ատելով ատում են բացի ռուսերից՝ թէ ֆինլանդիան, թէ լեհացին, թէ՛ հայը, թէ՛ թուրքը եւ վրացին, չհաշուած ուրիշ մանր ազգութիւններ, օրինակ՝ լատիշները, էստերը եւն։

Այդ երեւոյթներն ու պայմանները ցոյց են տալիս որ զօրքի մի մեծ մասն պէտք է մնայ երկրի ներսում կամ սահմաններում։ Մնացած կէսը բոլորովին անկարող է նոյն իսկ լրիւ տեղը հասնել՝ պատերազմի դաշտի հեռաւորութեան պատճառով։ Միայն Սիբերիայի ցրտերը եւ խորտ ու բորդ ճանապարհները անպէտ զօրք կը փչացնեն։ Սրանից մի երկու շաբաթ առաջ նոյն իսկ պաշտօնական կեղծ տեղեկութիւնները հաղորդեցին, որ Սիբերիայում Բայկալի մոտ ձիւնի ու ասողների տակ քանի հարիւր (իմա՛ իհարկէ, հազարներ) զօրք է մնացել ու սառել։

Ահա այդ փաստերը մեզ ցոյց են տալիս, որ Ռուսաստանի զօրքի քանակութիւնը այնքան սպառնական չէ, որքան թւում է կարմամիներին։

Այս փողի խնդիրը։ Դա մի այնպիսի գաղտնիքեան սուր է պատերազմի ժամանակ, որ ամեն ոք կարող է ընդունել կառավարութեան գլխին եւ ջախջախել նրա ինքնագով անպարծութիւնը։ Փողի խիստ կարօտութիւն է զգում կառավարութիւնը. ժողովուրդն էլ վերջին ծայր աղքատ է։

Այդ հանգամանքները գալիս են ապացուցանելու, որ Ռուսաստանը ա՛չ թէ առաջնակարգ ուժ է ներկայացնում, այլ ներկայումս նա եւրոպական պետութիւնների շարքում ամենաթոյլն է եւ գուցէ թոյլ ա՛յն աստիճան, որ գիսի դրութեան մէջ երբէք չէ եղել։ Մինչեւ այժմ Ռուսաստանը չի յիշում ոչ մի պատերազմ, երբ այդ կայսրութեան օտար միլիոնաւոր տարրերը լինէին այդպէս զայրացած, դժգոհ ու թշնամացած տէրութեան դէմ։

Նորերս լեհացիք բացարձակ կերպով յայտնել են Իրանից հակակրութիւնը դէպի ցարի կառավարութիւնը եւ սրա հակառակ արտայայտել են Իրանց համակրութիւնը եապոնացիներին։ Լեհացիք նոյն իսկ զիմել են եապոնական կառավարութեան եւ խնդրել, որ ռուս զօրքի մէջ պատահող լեհ զինուորը եթէ գերի ընկնի, նրա հետ մեզմ վարուեն, որովհետեւ նա իր կամքին հակառակ զէնք է կրում ռուսական շարքերում։ Եւ մի՞թէ նոյն զգացմունքով չեն գնում հայ, թուրք, հրէա, նոյն իսկ ռուս զինուորներից շատերը։

Դա բնական երեւոյթ է, որից խուսափել չէր կարող միապետական կառավարութիւնը։ Միապետութիւնը միշտ այդպիսի ճանապարհով է իր վախճանին մօտեցել։ Յիշեցէք մեծն Նապոլէօնի կեանքը։ Ճիշտ է այդ բիրտ ինքնակալը յաղթութիւններ արաւ, բայց վե՞րջը... Ժողովուրդի թշուառ դրութիւնը, հարկերի անտանելի ծանրութիւնը, ընտանիքներում տիրող սուգը՝ իրանց սիրելիների պատերազմի դաշտը գնալու պատճառով, բերին ու հասցրին այնտեղ, որ Նապոլէօնի զոռոզ յաղթութիւններն ու պարծանքը փչրուեցին ու տապալուեցին։

Ճիշտ այդպիսի պատմական ժամանակներում ենք ապրում այժմ մենք ռուսահպատակներս։ Ժանիր

ԹԱՒՐԻԶ. 1904 փետր. 21/5 մարտ

«Վերածնութիւնի» էջերը այնքան սուղ են, այնքան թանկագին մեզ համար, որ սրանց յաւում ենք երբ այդ էջերի թէկուզ մի ամենափոքր մասը սուպուած ենք լինում զոհել՝ մեր անալնի մրցակիցների ստոր ղըրպարտութիւններին եւ պաշտօնական տերին պատասխանելու համար։ Ցաւում ենք, որ հայ լրագրական ասպարիզում նրանց տեղ ընող օրգաններ կան, բայց աւելի ևս ցաւում ենք, երբ ստիպուած ենք «Վերածնութիւնում» — որ կոչուած է գիտութեան և ճշմարիտ ու վսեմ գաղափարի խօսքը քարոզելու — սիւնակները գրաւել, հերքելու համար ամեն տեսակ ամբաստանութիւններ և ստեր, որոնց յերիւրում է «Շարժումը» անընդհատ, շարունակաբար։

«Շարժումի» N-o 590-ի մէջ, ուր այդ թերթի խմբագրութիւնը իրան համնմատում է Նապարեանի և Դ. Արծրունու հետ (!!) և չի ամաչում ասելու «հատարիմ տպագրական խօսքի բարձր ու վեհ կոչման վեց տարի շարունակ հայկական իւաւար մթնոլորտի մէջ մնող քրեր ենք լոյսի պրոպագանդա» (!!!), անգ է տալ Թաւրիզից գրուած մի թղթակցութեան, որի մէջ այնքան սուտ կայ, որքան տող։ Այդ թղթակցութեան հեղինակը (իբր թէ Մարաղայից իրան գրած մի նամակի խօսքերով) բարդում է զանազան տեսակ զրպարտութիւններ Մարաղայի Հնչակեանների վրայ։ Որպէս թէ «մի քանի շաբաթ առաջ սրիկաներ» որոնք «հանրում են իրանց Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչներ» թալանում են (այդ հօ դաշնակցականների արհեստն է) Մարաղայի ժողովրդին. որպէս թէ Հնչակեանները «տեռորների սպառնալիքներ» են կարդում՝ 10—20 թումանի համար. որպէս թէ «հանդէսներում և այլ տեղերում Հնչակեան հիմնը երգելիս պահանջում են հանդիսականներից ոտքի կանգնել, հակառակ դէպքում սպառնալիք». որպէս թէ հանդանակած դրամով Թաւրիզում զէնք են գնում և ուղարկում Մարաղայ ժողովրդին սառապելու. որպէս թէ Թաւրիզում մի խելագար (ո՞վ է տեսել որ խելագարը քննադատի իր արարքների համար) փողոցներն ընկած 14—16 տարեկան աշակերտներին առաջարկում էր Հնչակեան գրել, կայլն, կայլն։

Արդարև որքա՜ն ընդունակ են «Շարժումի» թղթակիցները իրանց սոսկալի և ապանդակ սրտերը ճշմարտութեան դիմակով շպարելու և զարդարելու։ Մենք չենք զարդարի ճշմարտութիւնը, որովհետև նա մերկ էլ գեղեցիկ է։

Մենք Մարաղայում ո՛չ թէ «չլեսապատոր սրիկաներ» ունինք, այլ կանոնաւոր կազմակերպութիւն և մասնաճիւղ. այդ մասնաճիւղը ո՛չ թէ թալանում է Մարաղայի ժողովրդին, այլ ցոյց է տալիս ջերմ և եռանդուն գործունէութիւն, իսկ ժողովուրդը ոչ թէ թալանում է, այլ և իբրև գարերի ընթացքում հարատահարուած ժողովուրդ, զգում է ազատութեան հարկը և իր կարողութեան չափով ձգտում է օժանդակել հայութեան ազատագրութեան Ս. գործին։ Եւ ամենին անդամը չէ որ նա իր գրամական աջակցութիւնն է ցոյց տալիս հայ ճշմարիտ յեղափոխականին, նա շատ ամգամ է կատարել իր ազգասիրական պարտականութիւնը։ Հանդանակութիւնը ո՛չ թէ արուած է սպառնալիքներով, այլ նա արել է անզգայ մի քանի ականաւոր անձնաւորութեանց նախաձեռնութեամբ և արդիւնքը հասել է մօտ 5000 զրանի, որի համար խորին շնորհակալութեան արժանի են թէ նախաձեռնողները և թէ նուիրատուները։ Հանդանակութեան գրամով ո՛չ թէ զէնքեր են գնում Մարաղայի ժողովրդին տարապելու համար, այլ այդ գումարի մի մասը արդէն ուղարկուած է Հ.Կ. կենտ. վարչութեան և մնացածն էլ կուղարկի հանդանակութիւնը վերջանալուց յետոյ։ Ճիշտ է Հնչակեան դրօշները երկու անգամ ներկայացում են տուել Մարաղայում, բայց գրանցից մէկի արդիւնքը յատկացուած է այնտեղ գրագրանին և միւսինը՝ բերմն. և թէ բարոյապէս ազդել են (ոչ թէ սպառնացել են) մարդերին ամրակամ գնելու, այդ արել են տեղական հատատութիւնների օգտին և ո՛չ Հնչակեան կուսակցութեան։ Հնչակեան հիմնը երգելու կամ նագելու ժամանակ գէթ մեր կողմերի Հնչակեանները սովորութիւն ունին ոտքի կանգնելու՝ արդ եթէ երբեմն ներկայ եղողներն էլ հետեւում են նրանց, այդ տեղ ի՞նչ նախանձելու բան կայ. իսկ զրպարտել թէ դրա համար Հնչակեանները պահանջող են և սպառնալիք են կարդում, աւելի քան ծիծաղելի է։ Գալով երեւակայական «խելագարին», թղթակիցը սխալւում է. այդ խելագարը անշուշտ դաշնակցական պիտի եղած լինի, որ Իլլաւայի դպրոցի բոլոր աշակերտներին դաշնակցական է գրել տուել. մինչդեռ ամբողջ Թաւրիզում մի հատ էլ Հնչակեան գրուած աշակերտ չկայ։

Մենք հասկանում ենք թէ «Շարժումի» թղթակիցը ինչից դրդուած յերիւրում է այդ ստերը։ Հնչակեանների Մարաղայում ունեցած յաջողութիւնները սատիկ շարժել է նրա և իրայինների չարնախանձը. և հէնց դրա համար էր որ Թաւրիզի Դաշ.-ները յատուկ ներկայացուցիչ ուղարկեցին Մարաղայ՝ դաշ. բիւրօ հիմնելու համար. բայց նա ձեռնունայն վերադարձաւ։ Երեւի հէնց այդ պատճառով էլ է, որ յիշեալ թղթակիցը յարձակւում է մարաղացիների վրայ՝ անուանելով նրանց «տգէտ» «թրքաբասա», «անկարող յեղափոխութեան մասին մտածելու անդամ» կայլն. մինչդեռ փոքր ինչ ներքեւում նա ասում է որ «Մարաղայի հայը այսօր գիտէ հայերէն խօսել, նա ունի դպրոց և գրադարան, նա յաճախում է թատրոն, շինել է ակշիկների համար ուսումնարան և կազմել է ֆոնդ» և այլն։

Բարի նախանձը գովելի է և ազնիւ մրցումը մի անհրաժեշտ պայման յեղ. գործունէութեան յառաջդիմութեան համար. բայց ու՞մից ի՞նչ ենք պահանջում...

Սշահ.

Հնչ. Սոց.-Յեղ. Կուս.-թեան Մարաղայի Մասնաճիւղի գանձարանում շնորհակալութեամբ ստացել են հետեւեալ գումարները.—

Պ. պ. Կ. Բէգ.-ներից՝ 2000 զրան եւ Ց. Խ.-ներից՝ 500 զրան։ Մեսնելի նուիրատուութեանց մանրամասն հաշիւը կը տպագրի հանգանակութիւնը վերջանալուց յետոյ։

Սպանդարաս Կամսարական

20 Յունվ. 904 թ. Մարաղա։

Բարիզաբնակ պ. Յակոբ Գաբրիէլեանէ. — որ ժամանակէ մը իվեր Սոֆիա կը գտնուէր, — Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ 5 ֆրանք՝ ո՛եւէ ազգ. հաստատութեան մը վերամասնայ «Վերածնութիւն» ղրկելու համար։

Արդ, սիրով կը յատկացնենք զայն „Թաւրիզի հայուհեաց բարեգործական միացեալ ընկերութեան“, որուն եռանդուն գործունէութիւնը արժանի է ամէն քաջալերութեան, մանաւանդ որ այդ իրապէս օգտակար հանդիսացող ընկերութեան շնորհիւ բազմաթիւ վարժարաններ կը նպաստաւորուին Պարսկաստանի մէջ։

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Печат. Б. Н. Малджиевъ. — Русе.